# ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

| Թեստային առաջադրանքի ձևերը | Հարցը կամ խնդիրը | Օրինակ |
|---|---|---|
| 1. Ճիշտ պատասխանի ընտրություն | Նշեք ճիշտ պատասխանը | Ո՞ր բառերն են նշվում նախագծի վերնագրում, եթե օրենքի նախագծով նախատեսվում են մեկից ավելի փոփոխություններ կամ լրացումներ:<br>Ա. «վերանայված տարբերակի մասին»<br>Բ. «փոփոխումն իրականացնելու մասին»<br>Գ. «փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» |
| 2. Այլընտրանքային ընտրություն | Պատասխանեք «Այո» կամ «Ոչ» | Ճիշտ է արդյո՞ք, որ իրավական ակտում լրացումները կատարվում են դրանում նոր բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ, նախադասություններ, բառեր կամ թվեր լրացնելու միջոցով:<br>Պատասխան՝<br>«Այո»<br>«Ոչ» |
| 3. Համապատասխանության որոշում | Դասավորեք ըստ համապատասխանության՝ ձախ սյունակի բառերին համապատասխան աջ սյունակի հայերեն համարժեքները: | 1. Պրեզենտացիա Ա. Շնորհանդես<br>2. Մենեջմենթ Բ. Ազատականություն<br>3. Տոտալիտարիզմ Գ. Ամբողջատիրություն<br>4. Լիբերալիզմ Դ. Կառավարում<br>Պատասխան՝<br>1) 1-Ա, 2-Բ, 3-Դ, 4-Գ<br>2) 1-Դ, 2-Ա, 3-Գ,4-Բ<br>3) 1-Ա, 2-Դ, 3-Գ, 4-Բ<br>4) 1-Բ, 2-Գ, 3-Դ, 4-Ա |
| 4. Հաջորդականության որոշում | Դասավորեք ճիշտ հերթականությամբ | Դասավորել կարգապահական տույժերը՝ մեղմից ավելի խիստ հաջորդականությամբ՝<br>1. Խիստ նկատողություն.<br>2. Պայմանագրի լուծում.<br>3. Նկատողություն<br>Պատասխան՝<br>1) 1, 2, 3<br>2) 2, 1, 3<br>3) 3, 1, 2 |